



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 ապրիլի 2018 թվականի
Թիվ 48-Ա, քաղաք Երևան

**«ՋԵՐՄՈՒԿԻ ՀԻԴՐՈՏԵՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ««ՋԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
և ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ ԱՇՈՏ ԱՐՍԵՆՅԱՆ, ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ ՈՒ ՎԱՀԱԳՆ
ԱՐՍԵՆՅԱՆ» ԱՆՁԱՆՑ ԽՄԲԻ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ
ԵՎ ԱՆՁԱՆՑ ԽՈՒՄԲ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի ապրիլի 9-ի դռնբաց նիստում քննարկեց «Ջերմուկի Հիդրոտեխ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Ջերմուկի Հիդրոտեխ» ընկերություն) և ««Ջերմուկ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերություն և ֆիզիկական անձինք Աշոտ Արսենյան, Գայանե Մկրտչյան ու Վահագն Արսենյան» անձանց խմբի համակենտրոնացման և անձանց խումբ համարելու վերաբերյալ հարցը:

Քննարկման արդյունքում Հանձնաժողովն ամրագրեց հետևյալը:

Հանձնաժողովի 2017 թվականի մարտի 10-ի թիվ 43-Ա որոշմամբ «Ջերմուկ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերությունը և ֆիզիկական անձինք Աշոտ Արսենյանը, Գայանե Մկրտչյանն ու Վահագն Արսենյանը համարվել են անձանց խումբ (այսուհետ՝ Անձանց խումբ):

«Ջերմուկի Հիդրոտեխ» ընկերությունը և Անձանց խումբը 2018 թվականի մարտի 21-ին դիմում են (այսուհետ՝ Դիմում) ներկայացրել Հանձնաժողով հայտնելով, որ ֆիզիկական անձ Աշոտ Արսենյանը ցանկանում է ձեռք բերել «Ջերմուկի Հիդրոտեխ» ընկերության 50 տոկոս բաժնեմասը՝ արդյունքում ունենալով ընկերության 100 տոկոս բաժնեմասը: «Ջերմուկի Հիդրոտեխ» ընկերությունը և Անձանց խումբը խնդրում են թույլատրել նախատեսվող համակենտրոնացումը: Միևնույն ժամանակ նշվել է, որ համակենտրոնացումը գործողության մեջ դնելուց հետո, տնտեսական անհրաժեշտությունից ելնելով, հնարավոր է, որ «Ջերմուկի Հիդրոտեխ» ընկերությունը միանա «Ջերմուկ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ «Ջերմուկ Գրուպ» ընկերություն), ուստի խնդրում են «Ջերմուկի Հիդրոտեխ» ընկերությանը ընդգրկել Անձանց խմբում:

Դիմումի հիման վրա Հանձնաժողովի կողմից օրենքով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ: Դիմումին կից ներկայացվել են «Ջերմուկի Հիդրոտեխ» ընկերության և Անձանց խմբի կողմից կազմված հայտարարագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

Ներկայացված տեղեկությունների համաձայն, «Ջերմուկի Հիդրոտեխ» ընկերությունը հիմնադրվել է 2002 թվականին, իրականացնում է Էլեկտրական էներգիայի արտադրություն: «Ջերմուկի Հիդրոտեխ» ընկերության մասնակիցներն են հանդիսանում ֆիզիկական անձինք Աշոտ Արսենյանն ու Գագիկ Ղազարյանը 50-ական տոկոս բաժնեմասով: «Ջերմուկի Հիդրոտեխ» ընկերության 2017 թվականի ֆինանսական տարվա վերջի դրությամբ ակտիվների արժեքը կազմել է դրամ, հասույթի չափը՝
դրամ: Նախատեսվող գործարքի գինը կազմում է դրամ:

«Ջերմուկ Գրուպ» ընկերությունը հիմնադրվել է 1996 թվականին, իրականացնում է հանքային և աղբյուրի ջրերի արտադրություն և իրացում: «Ջերմուկ Գրուպ» ընկերության բաժնետերերն է հանդիսանում Վահագն Աշոտի Արսենյանը՝ 100 տոկոս փայաբաժնով: «Ջերմուկ Գրուպ» ընկերության 2017 թվականի ֆինանսական տարվա վերջի դրությամբ ակտիվների արժեքը կազմել է _____, հասույթի չափը՝ _____ դրամ: Հարկ է նշել, որ «Ջերմուկ Գրուպ» ընկերությունը Հանձնաժողովի 2011 թվականի հունվարի 26-ի թիվ 47-Ա որոշմամբ «Շշալցված հանքային ջուր» ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ:

Միաժամանակ ֆիզիկական անձ Գայանե Մկրտչյանին է պատկանում «Էկո Ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 100 տոկոս բաժնեմասը (ընկերությունը զբաղվում է խոշոր եղջերավոր կենդանիների բուծմամբ և կաթի արտադրությամբ): Ֆիզիկական անձ Վահագն Արսենյանին է պատկանում «Ռելուդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 30 տոկոս բաժնեմասը (ընկերությունն իրականացնում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ծառայությունների մատուցում):

Դիմումի ներկայացման պահի դրությամբ գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումը, եթե դա ինքնին կամ ձեռք բերողին արդեն պատկանող փայաբաժնի հետ միասին կազմում է այդ տնտեսվարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոսը կամ ավելին:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումը, մինչև գործողության մեջ դնելը, ենթակա է հայտարարագրման, եթե՝ համակենտրոնացման մասնակիցների ակտիվների կամ հասույթի ընդհանուր արժեքը (չափը) կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների կամ հասույթի արժեքը (չափը) դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների մասնակցի (մասնակիցների) ակտիվների և հասույթ(ների)ի արժեքը (չափը) սահմանելու, տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման հայտարարագրման կարգի և հայտարարագրի ձևի մասին» թիվ 478-Ն որոշմամբ սահմանված ակտիվների կամ հասույթ(ների)ի արժեքը (չափը) կամ համակենտրոնացման մասնակիցներից առնվազն մեկը որևէ ապրանքային շուկայում ունի գերիշխող դիրք:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձանց խումբ են հանդիսանում իրավաբանական և (կամ) ֆիզիկական այնպիսի անձանց խումբ, որոնք գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, և (կամ) որոնց նկատմամբ բավարարվում է հետևյալ պայմաններից առնվազն մեկը՝

- կազմակերպությունը և ֆիզիկական կամ իրավաբանական անձը, եթե այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդ կազմակերպությունում իր մասնակցության և (կամ) պայմանագրի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի կերպով տնօրինելու (այդ թվում՝ առուվաճառքի, լիազորագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրի, հանձնարարության կամ այլ գործարքների միջոցով) կազմակերպության կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին,

- ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք, որոնցից յուրաքանչյուրը սույն մասում նշված հիմքերից որևէ մեկով անձանց խումբ է կազմում միևնույն անձի հետ, ինչպես նաև այլ անձինք, որոնք սույն մասում նշված հիմքերից որևէ մեկով տվյալ անձանցից որևէ մեկի հետ անձանց խումբ են կազմում:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց խումբն Օրենքի իմաստով անձանց խումբ է համարվում Հանձնաժողովի որոշմամբ:

Փաստորեն «Ջերմուկ Գրուպ» ընկերության ակտիվների և հասույթի արժեքը (չափը) գերազանցում է Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 478-Ն որոշմամբ

սահմանված ակտիվների և հասույթի արժեքը (չափը), ինչպես նաև ընկերությունը Հանձնաժողովի որոշմամբ համարվել է գերիշխող դիրք ունեցող, ուստի կարելի է եզրակացնել, որ նշված գործարքն Օրենքի իմաստով հանդիսանում է համակենտրոնացում և այն ենթակա է հայտարարագրման:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ համակենտրոնացման մասնակից ընկերությունները գործում են տարբեր ոլորտներում, Հանձնաժողովը գտնում է, որ նշված համակենտրոնացումը մրցակցությունն էապես չի խոչընդոտում, գերիշխող դիրքն ամրապնդող համակենտրոնացում չէ և ենթակա է թույլատրման:

Հարկ է նաև նշել, որ համակենտրոնացման արդյունքում «Ջերմուկի Հիդրոտեխ» ընկերության և Անձանց խմբի միջև կառաջանան անձանց խմբի հատկանիշներ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Օրենքի 4-րդ, 8-րդ, 9-րդ հոդվածները, 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «թ» կետերը, ինչպես նաև Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 478-Ն որոշումը՝ Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է

1. Թույլատրել «Ջերմուկի Հիդրոտեխ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ««Ջերմուկ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերություն և ֆիզիկական անձինք Աշոտ Արսենյան, Գայանե Մկրտչյան ու Վահագն Արսենյան» անձանց խմբի համակենտրոնացումը՝ ««Ջերմուկ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերություն և ֆիզիկական անձինք Աշոտ Արսենյան, Գայանե Մկրտչյան ու Վահագն Արսենյան» անձանց խմբի կողմից «Ջերմուկի Հիդրոտեխ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 50 տոկոս փայաբաժնի ձեռքբերման միջոցով:

2. «Ջերմուկի Հիդրոտեխ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և ««Ջերմուկ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերություն և ֆիզիկական անձինք Աշոտ Արսենյան, Գայանե Մկրտչյան ու Վահագն Արսենյան» անձանց խմբին համարել անձանց խումբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը ««Ջերմուկ Գրուպ» փակ բաժնետիրական, «Ջերմուկի Հիդրոտեխ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ և ֆիզիկական անձինք Աշոտ Արսենյան, Գայանե Մկրտչյան ու Վահագն Արսենյան» անձանց խմբին հանձնելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում: Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԱԲՈՅԱՆ